

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՀՈՐԵՇՆԱԲԹԻ, 27 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ.  
№ 40 (458)

...էլի ես որք ու  
արնավառ իմ  
Հայաստան-յարն  
եմ սիրում:

Եղիշե Հարենց

## Անցնող տարում՝ մեկ միջազգային եւ երեք հանրապետական մրցանակ



Կենտրոնում՝ Ազատ Գասպարյան, «Մեդրու ճՇՇ2» ՍՊԸ տնօրեն  
Լուսանկարը՝ Գ.Վարդանյանի

էջ 4

## Արամ Յոլյան. «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ»-ն իր կարելությունները առաջնային դիրք է զբաղեցնում մեր հանրապետության էներգահամակարգում»

Հարցազրույց «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության արտադրության ղեկավար Արամ Յոլյանի հետ

- Երկու եւ ավելի տարի է, ինչ ամերիկյան «Քոնթուր Գլոբալ» ընկերությունը նախկին «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲ ընկերության սեփականատերն է: Եթե կարելի է, համառոտ ներկայացրեք, թե ինչ ասել է «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ընկերությունը:  
- 2015թ. օգոստոսից «Որոտանի ՀԷԿ-երի համակարգի» սեփականատեր է ամերիկյան, «Քոնթուր Գլոբալ» ընկերությունը, որն աշխարհի ավելի քան 20 տարբեր երկրներում էներգետիկայի ոլորտում կատարում է ներդրումներ՝ հիմնականում գնում, կառուցում, վերագիծում եւ շահագործում է էներգիա արտադրող օբյեկտներ, ջերմային էլեկտրակայաններ, հիդրոէլեկտրակայաններ, արեալին եւ հողմային էներգիա արտադրող կայաններ, այսինքն՝ համարյա ամեն տեսակի, բացի ատոմակայաններից: «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ»-ը կազմված է չորս ջրամբարից, երեք հիդրոէլեկտրակայանից եւ մեկ օրական

կարգավորման ջրամբարից: Հիդրոէլեկտրակայանների համակարգը կազմված է երեք աստիճանից: Գումարային տեղակայված հզորությունը կազմում է 404.2 մՎտ, տարեկան միջին նախագծային արտադրանքը՝ 1.16 մլրդ կՎտ. ժամ, որը կազմում է հանրապետությունում արտադրվող էլեկտրիկայի մոտավոր 15 տոկոսը: 1970թ. դեկտեմբերին շահագործման է հանձնվել համակարգի առաջնեկը՝ Տաթևի ՀԷԿ-ը, 1978թ.՝ Շամբ ՀԷԿ-ը, իսկ 1989թ.՝ Սպանդարյան ՀԷԿ-ը:  
Ինչպես գիտեք, մեր հիդրոկասկադն իր ուրույն տեղն ունի հայկական էներգահամակարգում, հատկապես՝ օրվա ծանրաբեռնված ժամերին պահանջվող բեռի ապահովման գործում: Տաթևի ՀԷԿ-ը հանրապետության մասշտաբով կարգավորում է էներգահամակարգում, Հայաստան-Իրան փոխհոսքերը: Մի խոսքով՝ «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ»-ն իր կարելությամբ

էջ 7



էջ 5

## Մեդրու ազատ տնտեսական գոտու գործունեության մեկնարկը

Վարչապետ Կարեն Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզ, որտեղ ներկա է գտնվել «Մեդրու ազատ տնտեսական գոտու» բացման արարողությանը: Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել գոտու տարածքով, ծանոթացել այստեղ ստեղծված ենթակառուցվածքային պայմաններին եւ առաջիկայում նախատեսվող աշխատանքներին:  
Ազատ տնտեսական գոտին ստեղծվել է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, գոտու կազմակերպիչ է ծանաչվել պետության կողմից ստեղծված «Մեդրու ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն: Նախապատրաստական աշխատանքներն ավարտվել են, եւ դեկտեմբերի 15-ին տրվեց ազատ տնտեսական գոտու գործունեության պաշտոնական մեկնարկը: ԱՏԳ-ն նախատեսված է կառուցապատել 2 փուլով:  
Առաջին փուլով ստեղծվել են նվազագույն անհրաժեշտ ենթակառուցվածքներ եւ նախապայմաններ՝ ԱՏԳ աշխատանքները մեկնարկելու եւ ԱՏԳ-ում գործունեություն ծավալելու հետաքրքրություն ունեցող ընկերությունների հետ տեղում գործունեությունը կազմակերպելու համար:  
Երկրորդ փուլով նախատեսվում է ԱՏԳ գործունեության, ենթակառուցվածքների, տարածքի հավելյալ 70 հեկտարով ընդլայնում՝ ստեղծելով նախապայմաններ շահութաբեր բիզնես ծավալելու համար: Վերոնշյալ տարածքներից շուրջ 50 հեկտարը կտրամադրվի շահագործողների գործունեության, 10 հեկտարը՝ լոգիստիկ-պահեստային տարածքների, մնացած տարածքները՝ գրասենյակային եւ այլ ծառայությունների համար:  
Լրագրողների հետ զրույցում վարչապետ Կարապետյանը նշել է, որ ԱՏԳ-ի հետ կապված կառավարության մտադրությունները լուրջ են: «Մեր մտադրությունները բավական լուրջ են, որովհետեւ վստահ ենք, որ այն պայմանները, որոնք ստեղծվելու են Մեդրուի ազատ տնտեսական գոտում եւ այն հնարավորությունները, որոնք ունի մեր երկիրը, նկատի ունեն տնտեսական ռեժիմները, որոնք մենք ունենք ԵԱՏՄ-ի, Եվրամիության, մեր հարեւան Իրանի ու այլ երկրների հետ, շատ լավ հնարավորություններ են ստեղծում, որպեսզի բիզնեսը զարգանա», - ասել է վարչապետը՝ ավելացնելով, որ տնտեսական գոտում նախատեսվում է ակտիվացնել Իրանի հետ սահմանային առևտուրը, զբոսաշրջությունը, ակնկալվում է, որ իրանցի գործընկերները կտեղակայվեն այստեղ, որպեսզի դուրս գան եւ Եվրամիության, եւ ԵԱՏՄ շուկաներ: «Ակնկալում ենք նաեւ, որ մեր գործընկերները կտեղակայվեն այստեղ, որպեսզի Իրանում աշխատելու հնարավորություն ունենան: Վստահ են, որ ազատ տնտեսական գոտին ունի շատ լավ հեռանկարներ: Ուրախ ենք, որ այսօր հայտարարվում է ազատ տնտեսական գոտու ռեժիմը բացելու մասին, սակայն իսկական աշխատանքը հիմա է սկսվում», - ընդգծել է նա:  
Ազատ տնտեսական գոտու հնարավորությունները լավագույնս օգտագործելու համար թույլատրվել է ոլորտային լայն ընդգրկվածություն. ներկայացված կլինեն գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, առևտրի, փոխադրումների եւ

# Միքայել Սկրտումյանը՝ Մեղրու զինվորական կոմիսար

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով հոկտեմբերի 12-ին Մեղրիի զինվորական կոմիսար է նշանակվել փոխգնդապետ Միքայել Սկրտումյանը՝ այդ պաշտոնում փոխարինելով Մեղրու երկարամյա զինկոմ, մայոր Դավիթ Անանյանին:

Ծնվել է 1981 թվականի հուլիսի 16-ին Մեղրու տարածաշրջանի Ագարակ քաղաքում: 1998-ին ավարտել է Ագարակի Ե.Չարենցի անվան միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, ավարտելով 2002-ին ստացել է մոտոհրաձգային ստորաբաժանումների հրամանատարի մասնագիտություն: 2002-ից ծառայության է անցել հանրապետությունում տեղաբաշխված զորամասերում որպես դասակի, վաշտի, գումարտակի հրամանատար: 2013-ից մինչև 2015 թվականը ՀՀ պաշտպանության նախարարության Վազ-

գեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում անցել է հրամանատարագործի դասընթացներ, որն ավարտել է 2015 թվականին: 2015 թվականից մինչև նոր նշանակումը Գյումրիում տեղակայված գումարտակի հրամանատարն էր:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

Նորանշանակ զինկոմը «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ պատրաստ են 2018 թվականի ծննդային զորակոչին, մեղրեցի զինակոչիկների առաջին խումբը հանրապետական հավաքակալային կմեկնի հունվարի կեսին: Սա զինկոմի անդրանիկ զորակոչն է, բնականաբար, հետաքրքրվեցինք, թե ինչ պատրաստակամությամբ են մեղրեցի զինակոչիկները մեկնում հայոց բանակ՝ սահմանադրական պարտքը կատարելու:

«Երիտասարդները բուժզննում են անցել, նրանց առողջական վիճակը բավարար է, հանդիպում-

ներ են անցկացվել զինակոչիկների հետ, մի խոսքով, նրանք լիովին պատրաստ են հայրենիքին ծառայելու», - տեղեկացրեց փոխգնդապետ Միքայել Սկրտումյանը:

Երկար տարիներ նա ծառայել է մարտական զորամասերում, ինչպես է հարմարվում զինկոմիսարիատում ծառայելուն: Մեր զրուցակցի փոխանցմամբ զինվորականը հարմարվելու խնդիր չի ունենում, նա միայն մտածում է իր ծառայողական պարտականությունները կատարել, իսկ դրան նպաստում է մարտական ծառայության փորձը:

Մ.Սկրտումյանը նախորդ զինկոմին մայոր Դավիթ Անանյանին, դրական գծերով բնութագրեց եւ պատրաստակամություն հայտնեց շարունակելու այն ավանդույթները, որոնց հիմքը դրվել է Դավիթ Անանյանի պաշտոնավարության օրոք:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Լուսանկարը՝ Գ.Վարդանյանի

# Հաղորդում հանցագործության մասին

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին, պարզենը՝ ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանին, ՀՀ ազգային անվտանգության պետ Գեորգի Կուկոյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին



Արթուր Դավթյան, ՀՀ գլխավոր դատախազ



Վլադիմիր Գասպարյան, ՀՀ ոստիկանապետ



Գեորգի Կուկոյան, ՀՀ ԱԱԾ պետ



Արման Թաթոյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

2017թ. դեկտեմբերի 15-ին «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը (Սամվել Ալեքսանյան, Վահրան Օրբելյան եւ լուսանկարիչ Հարություն Վարդանյան) այցելել են Մեղրի լուսաբանելու Ազատ տնտեսական գոտու բացման արարողությունը, որին մասնակցելու էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը եւս:

Նախապես՝ սահմանված կարգով, համաձայնեցրել էինք մեր այցելությունը եւ Ազատ տնտեսական գոտի մուտք գործելու օրինական իրավունք ձեռք բերել:

Ժամը 13-ի սահմաններում արդեն Ագարակի մաքսակետում էինք՝ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ ջոկատի հսկողության ներքո գտնվող հսկիչ կետում, որտեղ էլ ստացել ենք անցագրեր ու միացել Ազատ տնտեսական գոտու վարչական շենքի մոտ հավաքված բազմությանը:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը (ով հավաքվածների մեջ էր), մեզ տեսնելով, ակնհայտորեն զարմացավ, շփոթվեց եւ սկսեց ինչ-որ անհասկանալի շարժումներ անել: Քիչ անց մեզ արդեն հայացքով հետեւում էին մարզպետի քիկնագործները, մարզպետի սպասավորները:

Իր չորս կողմն անընդհատ նայող եւ անհանգստացած մարզպետն ու նրա սպասավորները մի քանի րոպե շարունակ հեռախոսով խոսում էին ինչ-որ մարդկանց հետ, իսկ մենք հանգիստ կատարում էինք մեր աշխատանքը...

Մոտ 30 րոպե անց ինձ է մոտեցել Ռուսաստանի Դաշնության սահմանապահ ջոկատի մի սպա՝ մաքսավորի ուղեկցությամբ, եւ խնդրել (թերթի մյուս երկու ներկայացուցչի հետ) հետեւել իրեն ու վերադառնալ անցագրային կետ՝ առաջացած հարցերն այնտեղ պարզա-

բանելու համար: Մեր հարցին, թե ի՞նչ հարցերի մասին է խոսքը եւ ովքե՞ր են, որ հարցեր ունեն մեզ հետ կապված, պատասխանեց՝ ՀՀ ոստիկանությունը եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

Մենք հետեւեցինք նրան. անցագրային կետում սահմանապահ ջոկատի ռուս մայրը մեզանից պահանջեց վերադարձնել անցագրերը, քանի որ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն ու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը նպատակահարմար չեն գտնում «Սյունյաց երկրի» ներկայությունը Ազատ տնտեսական գոտում: Սպան նույնիսկ կատակեց՝ «Ամուսն է Ազատ տնտեսական գոտու, բայց բոլոր լրագրողները չէ, որ կարող են ազատորեն լուսաբանել վարչապետի մասնակցությամբ նախատեսված միջոցառումը»: Սահմանապահը խորհուրդ տվեց հարցը պարզաբանելու համար դիմել Մեղրի մաքսակետաժնի պետ Սամվել Հայրապետյանին, ով էլ քիչ հետո սասց, որ ինքը տեղյակ չէ, թե ինչն են «Սյունյաց երկրի» լրագրողներին հետ կանչել, նաեւ սասց, որ ինքը խնդիր չունի որեւէ լրատվամիջոցի հետ:

Փորձեցինք պարզել՝ ՀՀ ոստիկանությունից եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից կոնկրետ ովքե՞ր են անհատականաբար մեր գտել «Սյունյաց երկիր» թերթի լրագրողների մասնակցությունը միջոցառմանը: Պարզվեց, որ ո՛չ ոստիկանությունից, ո՛չ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից որեւէ նման հանձնարարություն չի եղել:

Դրանից հետո ես մտա մաքսատան այն սեյակ, որտեղ այդ պահին անց էր կացվում մի կողմից՝ ՀՀ վարչապետի խորհրդական Գագիկ Մարտիրոսյանի, ՀՀ տնտեսական զարգաց-

ման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանի, Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արտաշես Թումանյանի, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ներկայացուցիչների հանդիպումը: Այնտեղ էր նաեւ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

Ընդհատելով հանդիպումը՝ ես հայտարարություն արեցի լրագրողների շուրջ ստեղծված վիճակի կապակցությամբ՝ ուղղված ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ նկատի ունենալով, որ հենց այդ գերատեսչության ներքո է գտնվում Ազատ տնտեսական գոտին: Իմ հայտարարությամբ խնդրեցի նախարարին՝ թույլ չտալ, որ ինչ-որ մարդիկ, օգտվելով իրենց պաշտոնական դիրքից, խոչընդոտեն լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը:

Սուրեն Կարայանն ի պատասխան սասց, որ ինքը որեւէ մեկին չի խոչընդոտում՝ այդ թվում եւ մեր թերթին: ՀՀ վարչապետի խորհրդական Գագիկ Մարտիրոսյանն էլ վերահաստատեց նախարարի խոսքը եւ առաջարկեց մտել իրենց հետ, ու իրենց հետ էլ գնալ միջոցառմանը մասնակցելու:

Ես, իհարկե, չմնացի բանակցությունների սենյակում եւ գերադասեցի սպասել միջանցքում:

Մոտ տասը րոպե անց նրանք իրանցի հյուրերի հետ դուրս եկան միջանցք. Գագիկ Մարտիրոսյանը մոտեցավ մեզ եւ ավստանքով խոստովանեց, որ ո՛չ ինքը, ո՛չ նախարարը չեն կարող այդ խնդիրը լուծել, թեեւ խոստացել էին: Նա մեր ներողամտությունը հայցեց եւ շարունակեց իր ճանապարհը...

Արդյունքում «Սյունյաց երկիր» թերթի

լրագրողներին արգելեցին լուսաբանել Մեղրու ազատ տնտեսական գոտու բացման արարողությունը:

Կարծում ենք, որ տեղի ունեցածով խոչընդոտ է հարուցվել «Սյունյաց երկիր» թերթի լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը, իսկ խոչընդոտները հարուցել է Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը՝ օգտվելով իր պաշտոնական դիրքից: Մարզպետը փաստորեն սարսափել է, որ վարչապետի ու բարձրաստիճան մյուս հյուրերի ներկայությամբ իրեն ինչ-որ հարցեր կուղղենք կամ կձայնագրենք իր հավերժորեն անհեթեթ խոսքը կամ էլ կլուսանկարենք իրեն:

Վահե Հակոբյանի արարքը, իր պաշտոնական դիրքի օգտագործմամբ, պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 164-ով սահմանված հանցագործության հատկանիշներ, ինչը ենթակա է իրավական գնահատականի:

Սյունիքի մարզպետի արարքը, իր պաշտոնական դիրքի օգտագործմամբ, հակասում է նաեւ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ կետին:

Խնդրում ենք Վահե Հակոբյան պաշտոնյայի արարքին տալ համապատասխան գնահատական:

Իսկ պարոն Վլադիմիր Գասպարյանին եւ Գեորգի Կուկոյանին խնդրում ենք պարզել, թե ովքեր են Մեղրու մաքսակետում Հայաստանի Հանրապետության ոստիկանության եւ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության անունից ռուս սահմանապահներին հանձնարարություն իջեցրել «Սյունյաց երկիր» թերթի առնչությամբ:

ՍՍԱՎԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր  
15 դեկտեմբերի 2017թ.

# «Սյունիքի մարզի փարվա մարդ» մրցույթի ոչ սովորական արդյունքը



Մայիս Միրզոյան



Արմեն Բեգլարյան



Սեդրակ Ասրյան



Սերգեյ Դանդայան



Դավիթ Սարգսյան



Եղիշե Նիսակյան



Էդուարդ Ալեքսանյան



Կարո Համբարձումյան



Արմեն Հովհաննիսյան



Գագիկ Փարսադանյան



Արմեն Գասաբյան

2017թ. նոյեմբերի 1-30-ը «Սյունյաց երկիր» թերթը փորձեց որոշարկել, թե մարզի բնակիչների կարծիքով ում կարող ենք հռչակել «Սյունիքի մարզի տարվա մարդ»:

Մոտ 27 հազար հոգի սահմանված կարգով մասնակցեց մրցույթ-քվեարկությանը:

Նրանց մեծ մասը յուրօրինակ կերպով արձագանքեց հայտարարված մրցույթին:

Առաջարկվեց «Սյունիքի մարզի տարվա մարդ» ճանաչել ոչ թե մեկ հոգու, ինչպես ընդունված է սովորաբար, այլ 2016թ. ապրիլյան պատերազմում նահատակված տասներեք սյունեցիներին:

Թերթի ընթերցողներից մեկն այսպես էր ձեռնարկել իր դիրքորոշումը, որն այս դեպքում կարելի է եւ ընդհանրացնել՝ «Թեև նրանք զոհվեցին 2016-ին, բայց իրենց սխրանքով ու հայրենասիրությամբ նորովի իմաստավորեցին 1980-ականների վերջին վերսկսված պայքարը, նաև 2016-ին հաջորդող տարիների մեր անցնելիք ծանապահիքը, նոր լիցք հաղորդեցին հայոց նորանկախ երկու պետության հետագա կայաց-



Նորիկ Գասաբյան

ման եւ հզորացման ազգային մեր ձգտումներին. իսկ 2017-ն այդ առումով առաջին տարին էր: Ասել է թե՛ անցնող տարում իրենց ոգեղեն ներկայությամբ նրանք առաջնորդ եղան մեր ընթացքին»:

Խմբագրությունը ոչ միայն առանց վերապահումի ընդունում է այդ առաջարկությունը, այլև բարձր գնահատում մեր համերկրացիների քաղաքացիական դիրքորոշումը, որն այս դեպքում հայրենասիրության յուրօրինակ դրսևորում է եւ հայրենիքի պաշտպանության ժամանակ նահատակվածների անմար հիշատակի հանդեպ խոնարհումի արտահայտություն:

Այս քվեարկությամբ Սյունիքի ժողովուրդը եւս մեկ անգամ փաստեց, որ մեր համերկրացի նահատակների անունները անջնջելի տառերով են գրված ոչ միայն մեր երկրամասի, ոչ միայն փոքր Սյունիքի, այլև հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ:

Այս քվեարկությամբ սյունեցիները եւս մեկ անգամ ցույց տվեցին, որ Արցախյան նորոշյա հերոսամարտում մարտիրոսվածների հիշատակը միշտ արթուն է,



Նարեկ Սկրպցյան

որ նրանց օրինակին հետեւելու պատրաստակամությունը եղել ու կա Սյունիքում, եթե հակառակորդը կրկին ոտնձգություն կատարի Արցախի հանդեպ:

Այս քվեարկությունը վերստին ցույց տվեց, որ Սյունիքն այսօր էլ շարունակում է ամուր քիկունք մնալ Արցախին, ինչպես 1990-ականներին:

Այսպիսով՝ 2017 թվականի «Սյունիքի մարզի տարվա մարդ» խորհրդանշական կոչումը շնորհում ենք 2016 թվականի ապրիլյան պատերազմի սյունեցի տասներեք նահատակներին՝

- Մայիս Երջանիկի Միրզոյան (Դարբաս համայնքի ղեկավար, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Արմեն Մինասի Բեգլարյան (Ախլաթյան համայնքի ղեկավար, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Սեդրակ Սերգեյի Ասրյան (Դարբաս, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Սերգեյ Գուրգենի Դանդայան (Սիսիան, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Դավիթ Բագրատի Սարգսյան (Բալաք, կամավորական, զոհվել

է 2016թ. ապրիլի 4-ին),

- Եղիշե Արտավազի Նիսակյան (Լժեռ, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան (Սիսիան, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Կարո Ծերունի Համբարձումյան (Վաղատին, կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 18-ին),

- Արմեն Արեգի Հովհաննիսյան (Ծղուկ, կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 7-ին),

- Գագիկ Կոլյայի Փարսադանյան (Կապան, կամավորական,

զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին),

- Արմեն Կառլենի Գասաբյան (Կապան, կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 6-ին),

- Նորիկ Ժորայի Գասաբյան (Կապան, ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 2-ին),

- Նարեկ Վարդանի Սկրպցյան (Գորիսի տարածաշրջանի գյուղ Որոտան, ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 3-ին):

Եվս մեկ անգամ խոնարհվում ենք նրանց անմահ հիշատակի առջև:

«Սյունյաց երկիր»



Նահատակված սյունեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը Թալիշ գյուղում, 28 հոկտեմբերի 2016թ.

# Անցնող տարում՝ մեկ միջազգային եւ երեք հանրապետական մրցանակ

Մեղրեցի ճանապարհաշինարարները մնայուն գործերով են փակում հաշիվները 2017 թվականի հետ: Հանրապետությունում հայտնի ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանը, ներկայացնելով արվածը, նշում է՝ բազմաթիվ աշխատանքներ կատարեցին: Եվ սրանք հավուր պատշաճի ասված խոսքեր չեն, քանզի վերջին տարիներին Մեղրու «Ճանապարհների շահագործում եւ շինարարություն ձեռնարկություն» ՍՊ ընկերությունը դադարել է սոսկ ճանապարհաշինարարական ընկերություն լինելուց եւ իրականացնում է նաեւ սոցիալ-մշակութային, արդյունաբերական, զինվորական, հիդրոտեխնիկական, վերջերս նաեւ էներգետիկական օբյեկտների շինարարություն: Ասվածի վկայությունն այն է, որ անցնող տարում, բացի մարզի միջպետական, հանրապետական եւ մարզային ճանապարհների ձեռնարկն եւ ամառային պահպանությունից, Ազարակի գործառն սպաների ընտանիքների համար 20 բնակարանաճյուղ շենքի կառուցմանն են ձեռնամուխ եղել, վերակառուցման աշխատանքներ են իրականացրել Ազարակի ենթակայանում: Ազարակի պղնձամուղիքներային կոմբինատի կարիքների համար մոտ երեք կիլոմետր երկարությամբ ջրատար են կառուցում, որ սկիզբ է առնում Կուրիս գյուղից եւ էպես կավելացնի ձեռնարկություն մղվող տեխնիկական ջրի քանակությունը: Իսկ ընկերության իրականացրած զուտ ճանապարհաշինարարական աշխատանքներից, նախևառաջ, կարելի է առանձնացնել U-2 միջպետական ճանապարհի 358+0,25 կիլոմետրի հատվածում կամրջի շինարարությունը, որն արդեն շահագործման է հանձնվել:

Ընկերությունը շահել էր 4,6 կիլոմետր ճանապարհահատվածի նորոգման մրցույթը, այս տարում իրականացվել է 2,5 կիլոմետրի ասֆալտապատումը, որի վրա դեռեւս որոշ աշխատանքներ պիտի կատարել, մասնավորապես՝ ասֆալտի վերին շերտի հետ կապված, իսկ նախատեսվածի մյուս մասը կավարտվի 2018 թվականին:

Անցնող տարվա վերջին երկու ամիսը լարված էր ճանապարհաշինարարների համար: Որպես ենթակապալառու կազմակերպություն (գլխավոր կապալառու «Հորիզոն-95» ՍՊ ընկերությունն էր (տնօրեն՝ Գագիկ Գալստյան)) Մեղրու «ՃՀԸՉ» ՍՊ ընկերությունն իրականացրեց Մեղրու ազատ տնտեսական գոտու վարչական շենքի վերակառուցումը եւ նրան հարակից մեկ հեկտար տարածքի բարեկարգումը: «Նախկինում դա գյուղատնտեսական նշանակության օբյեկտ էր, երկհարկանի շենքը երկու ամսում ամբողջովին վերակառուցվեց, փոխվեցին բոլոր կոմունիկացիաները: Հերոսական գործարեցինք, շնորհակալություն իմ կոլեկտիվի բոլոր անդամներին, նաեւ «Հորիզոն-95» ընկերության շինարարներին, ովքեր գործն առավոտյան սկսում էին, ուշ երեկոյան ավարտում: Երբեմն նույնիսկ մտածում էի, թե որոշ մարդիկ հաջորդ առավոտյան ի վիճակի չեն լինի աշխատանքի դուրս գալ: Բայց բարձր տրամադրությամբ ու պատասխանատվության մեծ զգացումով շարունակում էին աշխատանքը: Կուզեմ ասել՝ լավ կոլեկտիվ ունենալն ամեն ինչ է: Իսկ մենք գործին նմանակալով ձեռնարկեցինք աշխատանքները: Ձեռնարկն պայմաններում իրականացվեց աշխատանքների մի մասը, շինանյութերին հավելանյութեր էինք ավելացնում, որ անհրաժեշտ որակ ապահովվի: Շինարարությունը սկսեցինք հոկտեմբերի 19-ին, իսկ դեկտեմբերի 15-ին հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի մասնակցությամբ տեղի ունեցավ վարչական շենքի հանդիսավոր բացումը, շահագրգիռ կողմերի միջեւ կնքվեցին առաջին պայմանագրերը եւ հուշագրերը, ինչի համար մենք նույնպես անչափ լավ զգացինք, որ մեր աշխատանքի արդյունքը մի լավ նպատակի ծառայեց», - պատմում է Ազատ Գասպարյանը:

Այնուամենայնիվ, ո՞րն է այս տարվա գլխավոր կառույցը, որն իրականացրին մեղրեցի ճանապարհաշինարարները: Այցելելով Մեղրի, մենք անցանք նորակառույց կամրջով, որը հեռվից արդեն աչքի էր զարնում: Ի դեպ, սա Ազատ Գասպարյանի կառուցած-վերակառուցած երրորդ կամրջն է, 2018-ին կլինի նաեւ չորրորդը: Բայց, այնուամենայնիվ, ավարտվող տարում նա գլխավոր է համարում Ազարակի գործառն սպաների ընտանիքների համար կառուցվող 20 բնակարանաճյուղ շենքի շինարարությունը, որ սկսվել է հուլիսի 5-ին: Նպատակ ունեն շենքի շինարարությունն ավարտել 2018-ի մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության օրը, իսկ դրանից երկու օր առաջ կնքվի Սարգարապատի հերոսամարտի 100-ամյակը:

Մեղրի այցելելով՝ ճանապարհին արդեն նկատում ես ճանապարհաշինարարների աշխատանքի արդյունքը: Ճանապար-



«Միջազգային որակ-2017» մրցանակը



Ազարակ, սպաների համար կառուցվող շենքը



Նորակառույց կամրջը U-2 միջպետական ճանապարհի վրա



Մեղրու ազատ տնտեսական գոտու վարչական շենքը

ների ընտանիքների համար կառուցվող 20 բնակարանաճյուղ շենքի շինարարությունը, որ սկսվել է հուլիսի 5-ին: Նպատակ ունեն շենքի շինարարությունն ավարտել 2018-ի մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության օրը, իսկ դրանից երկու օր առաջ կնքվի Սարգարապատի հերոսամարտի 100-ամյակը:

Մեղրի այցելելով՝ ճանապարհին արդեն նկատում ես ճանապարհաշինարարների աշխատանքի արդյունքը: Ճանապար-

համերձ թեքությունները քերում-ազատում են կախված քարերից, թփերից, որ եւ տեսողաշող բացվի, եւ քարաթափության վտանգ չլինի: Հանդիպում ենք ճանապարհին մերձ կուտակված խճի բլուրների: Ճախապատրաստություն են տեսնում 2018-ի շինաշխատանքների համար: Նաեւ ավազի փոքրիկ կույտեր կան՝ վրան «Ավազ» մակագրությամբ ցուցատախտակ, որ տեղացած առատ ծյան ժամանակ, երբ ծածկվում է ամեն ինչ, վարորդները հեշտությամբ գտնեն ու ճանապարհին շաղ տան այն:

Ազատ Գասպարյանը տեղեկացնում է, որ ճանապարհների շինարարության մեջ ներառված են արհեստական կառուցվածքների՝ խողովակների ելքերի եւ մուտքերի նորոգումները: Նման աշխատանքներ վերջին անգամ 1997 թվականին են արվել: Այս ամենն արվում է ճանապարհի անվտանգությունն ու ձեռնարկ ամիսներին անցանելիությունն ապահովելու համար:

«Մենք շատ-շատ լավ ենք զգում, որ բացի վարորդից, նաեւ ուղեւորի ժպիտն ենք տեսնում, դա ամենամեծ գնահատականն է: Ուրախ են, որ վերջին տասը տարում չի եղել մի վթարային դեպք՝ կապված ճանապարհի տեխնիկական պարամետրերը չբավարարելու հետ: Ամենագրավիչը քաղաքացու՝ լինի մեքենայի վարորդ, հեծանվորդ, հետիոտն, թե ուղեւոր, երախտագիտության խոսքն ու ժպիտն են», - խոստովանում է մեր գրուցակիցը:

Գնահատանքն էլ չի ուշացել: Միայն անցած տարում չորս մրցանակի են արժանացել, որ ոգեւորում ու պարտավորեցնում է, բայց տնօրենի փոխանցմամբ՝ ամենահաճելին ու սպասվածը «Միջազգային որակ-2017» մրցանակն է, որ շնորհվեց «Մեղրու ՃՀԸՉ» ՍՊ ընկերությանը որակի համաշխարհային օրվա առթիվ (նոյեմբերի 18-ին): «Դա վկայություն է այն բանի, որ մեր կատարած աշխատանքի չափանիշներով արդեն դուրս ենք գալիս եվրասիական տնտեսական միություն: Դա մեծ շրջադարձ է մեր ընկերության պատմության մեջ», - վստահակաճի իրավունքով նշում է տնօրենը:

Համազգային վստահության խորհուրդն Ազատ Գասպարյանին փորձագիտական գնահատականների արդյունքում արժանացրել է «Բարձր վարկանիշ ունեցող ճանապարհաշինարար» անվանակարգին: Իսկ հանրային ծառայության ոլորտում սոցիոլոգիական հարցումների եւ փորձագիտական եզրակացության արդյունքում արժանացել է «Ճանապարհաշինարարական եւ շահագործական ձեռնարկության տարվա ղեկավար» անվանակարգին: Սա անմասնադատ է, երբ շինարարական մի կազմակերպություն տարվա ընթացքում այսպես մրցանակի է արժանանում:

Ազատ Գասպարյանը փոխանցեց, որ ճանապարհների պահպանության եւ շինարարության որակի վրա ամենօրյա հսկողություն կա տրամապարտի եւ կապի նախարարության, «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից, որոնք նաեւ ըստ ամենայնի աջակցում են Մեղրու ճանապարհաշինարարներին: «Շնորհակալ եմ իրենց, շնորհակալ եմ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին՝ մշտական աջակցության համար:

-Ինչո՞վ կարող ենք օգտակար լինել,- այսպես են արտահայտում վերադասն ու տարածքային իշխանությունն իրենց վերաբերմունքը մեր ընկերության հանդեպ», - միտքն ամփոփում է գրուցակիցս:

Այնուամենայնիվ, ինչ նոր գործեր են սպասվում 2018-ին: Տնօրենի փոխանցմամբ՝ ընկերության աշխատանքային ծավալները կավելանան 1,5 անգամ: Նախ՝ ավարտին կհասցվեն, ինչպես արդեն նշվեց, սպաների ընտանիքների համար շենքի շինարարությունը եւ 4,5 կմ ճանապարհահատվածի նորոգումը, նախատեսվում է եւս մի կամրջի շինարարություն: «Տաշտունի տակ սողանքային հատված կա, որի վերացումն ավելի անվտանգ կդարձնի ճանապարհը: Եվս 4,5 կմ ճանապարհահատվածի նորոգման մրցույթ կլինի: Թե ում կհաջողվի հաղթել մրցույթում, ով կիրականացնի շինարարությունը, ցույց կտա ժամանակը», - տեղեկացնում է տնօրենը:

Տարիներ շարունակ մի հետաքրքրական երազանք ուներ Ազատ Գասպարյանը՝ Մեղրի քաղաքը բարեկարգ ճանապարհով կապված տեսնել Նոնաձորին: Իրականացե՞լ է այն, թե՞



«Խելացի կառավարում-2017» մրցանակը



«Համազգային վստահություն-2017» մրցանակը



«Վստահության վարկանիշ-2017» մրցանակը



# Մեղրու ազատ փնտեսական գոտու գործունեության մեկնարկը

էջ 1  
պահեստային տնտեսության, զբոսաշրջության եւ այլ ոլորտները:

Ազատ տնտեսական գոտու գործունեության արդյունքում առաջիկա տարիներին նախատեսվում է ներգրավել 50-70 շահագործող ընկերություն, որոնք կիրականացնեն շուրջ 100-130 մլն դոլարի ներդրումներ, կատեղծեն շուրջ 1500 նոր աշխատատեղ եւ կարտահանեն 250 մլն դոլարի ապրանքներ եւ ծառայություններ:

Իրանի հետ սահմանակից տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտին, հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, առևտրային եւ լոգիստիկ հնարավորությունները, Հայաստանի բազմակետոր առևտրային արտոնյալ ռեժիմները, կարող է կամուրջ դառնալ Իրանի, ԵԱՏՄ եւ ԵՄ երկրների միջև: Բացի այդ, Մեղրու ազատ տնտեսական գոտին կնպաստի ոչ միայն մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այլեւ Հայաստան օտարերկրյա կապիտալի ներհոսքին, ԻԻՀ հետ տնտեսական կապերի ամրապնդմանը, ԵԱՏՄ անդամակցության, ԵՄ հետ առկա հարաբերությունների եւ ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը:

Վարչապետ Կարապետյանի ներկայությամբ ստորագրվել են ազատ տնտեսական գոտու գործունեության առաջին փաստաթղթերը: Մասնավորապես, ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության եւ «Մեղրի ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է պայմանագիր: Այն ստորագրել են նախարար Սուրեն Կարայանը եւ Մեղրու ԱՏԳ տնօրեն



Աշոտ Ջարբաբյանը:

Համագործակցության հուշագիր է կնքվել «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ի եւ «Հայիդրոէներգամախագիծ» ՓԲԸ-ի միջև: Փաստաթուղթը ստորագրել են Մեղրի ԱՏԳ-ի տնօրեն Աշոտ Ջարբաբյանը եւ «Հայիդրոէներգամախագիծ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արգամ Ջուլիակյանը:

Համագործակցության հուշագիր է կնքվել «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ի եւ «Արման ընդ պարտնյոր» ՍՊԸ-ի միջև: Հուշագիրը ստորագրել են Մեղրի ԱՏԳ-ի տնօրեն Աշոտ Ջարբաբյանը եւ «Արման ընդ պարտնյոր» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Մուրադյանը:

Համագործակցության հուշագիր է կնքվել նաեւ «Մեղրի ազատ

տնտեսական գոտի» ՓԲԸ-ի եւ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության առևտրային ներկայացուցչության միջև, որը ստորագրել են Մեղրու ԱՏԳ տնօրեն Աշոտ Ջարբաբյանը եւ առևտրային ներկայացուցիչ Անդրեյ Բաբկոն:

gov.am

15 դեկտեմբերի 2017թ.

## Կառավարությունը կների բնական աղբյուրներից փուժած հողօգտագործողների սերմացուի եւ պարարտանյութերի դիմաց ձեւավորված պարտավորությունները

Գործադիր ընդունել է որոշում, որով առաջարկվում է պետական աջակցության ծրագրերի շրջանակում 2011-2016թթ. աշնանացան ցորենի էլիտա ու առաջին վերարտադրության, գարնանացան գարու, առվույտի, կորնզանի սերմացու եւ 2015-2016թթ. պարարտանյութեր ստացած ու բնական աղետներից (կարկտահարություն, ցրտահարություն, սելավ) տուժած հողօգտագործողների 642,048,000 դրամի սերմացուի եւ 165,255,274 դրամի պարարտանյութերի դիմաց ձեւավորված պարտավորությունները ներել: Հիմնավորման համաձայն, մարզերում բնական աղետներից տուժել են մի շարք մարզերի հա-

մայնքներ եւ հողօգտագործողները հայտնվել են ծանր կացության մեջ: Բացի այդ, համապատասխան փոփոխությունները կկատարվեն նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության եւ «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում ու «Հրաշք այգի» ՍՊԸ-ների միջև կնքված վարկային պայմանագրերում:

Անդրադառնալով հարցին՝ վարչապետը նշել է. «Այսուհետ մաքուր էջից ենք սկսում: Կարծում են ճիշտ բան ենք անում, բայց հետագայում էլ կուտակումներ չլինեն: Բացառվում է, որ գանք մի վիճակի, որ ուրից գիջենք, բանի որ այժմ այդ հարցում բանաձեւը փոխել ենք»:

gov.am

## Կապան քաղաքը՝ «Լավագույն մարզական քաղաք»



Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության նախագահի 2017թ. մրցանակաբաշխության արդյունքում «Լավագույն մարզական քաղաք» ստուգատեսում 3-րդ տեղը շնորհվել է Կապան քաղաքին:

Վկայագիրը 2017թ. դեկտեմբերի 15-ին ստորագրել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա.Գեւորգյանը: Շնորհավորում ենք:

Սեփ. լրատվություն

Սյունի Համբարձումյան  
armilur.am  
28 նոյեմբերի 2017թ.

տակավին մնում է երազանք: «Ցավոք, առայժմ մնում է երազանք: Դուք եւս տեղյակ եք, որ Մեղրու տարածաշրջանի բոլոր համայնքների ճանապարհները բարեկարգված են, հիմնովին ասֆալտապատված, բացառությամբ Նոնաձորի: Նախկին երկաթուղու գծերի տեղով են մարդիկ գնում-գալիս, մեծ ջանքեր են անհրաժեշտ այդ ճանապարհահատվածը հաղթահարելու համար: Եթե Նոնաձորի ճանապարհը կառուցեն, կարող են բարձրածայն ասել, որ Մեղրիում այլեւս անելիք չունեն», - համոզված է վաստակաշատ ճանապարհաշինարարը:

Իսկ այս օրերին առաջնայինը ճանապարհների ծննդային պահպանումն է, որքան էլ այս դեկտեմբերն անձյուն ու արեւոտ դուրս եկավ: «Հենց նոր են գալիս Քաջարանից, լեռնագագաթին բուք էր, լավ է՝ ծյուն չկար, թե չէ կլցներ ճանապարհը, խնդիրներ կստեղծեր: Շուրջօրյա հերթապահություն է Մեղրու լեռնանցքում: Չհամաբարձրման տեխնիկան պատրաստ է «մարտի» դուրս գալու տարեքի դեմ: Եթե ամեն տարի Ամառորը նշում էին դեկտեմբերի 28-ին միայն ճանապարհային տնակում հերթապահողները, այս տարի որոշել են ամբողջ կոլեկտիվի հետ Նոր տարին նշել ճանապարհային այդ տնակում»:

Ազատ Գասպարյանը, մեր խնդրանքին, թե ինչ կնաղթեր թերթի ընթերցողներին Ամառորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, ասաց՝ խաղաղություն: Եթե կայուն խաղաղություն լինի, մյուս հարցերն ինքնաբերաբար կլուծվեն: Մարդիկ խաղաղ պայմաններում կհոգան իրենց համապատասխան հացը, ժպիտ կլինի նրանց դեմքին, սիրով ու ջերմությամբ կվերաբերվեն միմյանց: Մի խոսքով՝ անփորձանք տարի լինի 2018-ը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# ԲԿ հրամանատար, գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանի Ամա- նորի շնորհավորական ուղերձը

Սիրելի զինծառայողներ, 1-ին զորամիավորման փառահեղ տարեգրությունը հարստացավ եւս մեկ տարով: Արժեւորելով անցած տարին, կարող եմ հպարտությամբ ասել, որ զորամիավորման ենթակա ստորաբաժանումները հաջողությամբ կատարեցին անցած 2017 ուսումնական տարվա համար նախատեսված բոլոր ծրագրերը:

Ասեմ, որ ողջ զորամիավորումում ձեռքբերումները, ընդհանուր առմամբ, շատ են եւ զարգանալով, առաջ գնալով դրանց թիվը տարեցույցի էլ ավելի են շատանում:

Բանակային կորպուսում, նրա ենթակա զորամասերում բավականին մեծ փոփոխություններ են եղել, ստեղծվել են նոր ստորաբաժանումներ, որոնք ներդաշնակվել, համատեղ մասնակցել են փոքր ու մեծ, վերջին օրերին էլ աննախադեպ զորավարժություններին, գրանցել բարձր ցուցանիշներ:

Որպես շարքային քաղաքացի ու հայ մարդ, թե որպես զորամիավորման հրամանատար շնորհավորում եմ Հայոց բանակի, մասնավորապես՝ իմ ենթակայության զորամիավորման ողջ անձնակազմին՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ, ցանկանում նրանց բարի, անփորձանք ծառայություն:

Եթե, Աստված մի արասցե, նոր խնդիր առաջանա, կկարողանանք այն կարճ ժամանակում եւ առանց կորուստների կատարել:

Թող յուրաքանչյուր զինվոր պատվով ծառայի եւ ողջ, առողջ վերադառնա տուն, հասնի իր ընտանիքին, իր հող ու ջրին, իրեն սպասող հարգանքներին:

Շնորհավորում եմ ՀՀ ազգաբնակչության, մեր տեղակայման վայր երկրամասի՝ ողջ սյունեցիների Ամանորը, նրանց բարեմաղթում խաղաղ եւ ստեղծագործ կյանք, ամուր առողջություն, երջանկություն:

Շնորհավորում եմ մեր բազմաշարք ժողովրդին, թող 2018-ը նրա համար լինի խաղաղ եւ նպաստավոր, բերքաբեր տարի, որպեսզի հազարամյակներից եկած մեր տաղանդավոր եւ անպարտ ժողովուրդը գալիք տարում եւ այդուհետ ապրի, արարի միայն խաղաղ եւ կապույտ երկրների տակ, շենացնի իր երկիրը:

Թող այս հողից ոչ ոք ոչ մի ժամանակաշրջանում չկտրվի, իր երջանկությունն ու ապագան սյունեցին թող տեսնի եւ կառուցի իր հողի վրա:

Ազգ-բանակ հասկացությունը դարերից է գալիս, բարեբախտաբար, այն այսօր մենք էլ ավելի ամրապնդեցինք եւ դեռ ամրապնդելու ենք բանակի առաջընթացի մեջ, ժողովրդի հետ միասին, ձեռք ձեռքի տված:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

**Տիգրան Փարվանյան**  
գեներալ-մայոր, բանակային 1-ին զորամիավորման հրամանատար



# Սմբատ Դադոյան. «Հունվարին զորակոչվող զինակոչիկները կարող են օգտվել «Ես եմ» ծրագրից»

«Այունյաց երկրի» հարցերին պատասխանում է Կապանի նորանշանակ զինկոմ Սմբատ Դադոյանը

- Պարո՛ն փոխգնդապետ, նախ՝ շնորհավորում ենք Կապանի զինկոմի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, մաղթում հաջողություններ:

Ենթադրում ենք, որ պաշտոնեական նոր պարտականություններին անցումը հեշտ է կատարվել, քանի որ 10 տարուց ավելի է՝ այդ համակարգում եք: Ձեր գնահատականը մեր նկատառման վերաբերյալ:

- Բնականաբար, զինվորական կոմիսարիատի ոլորտում սկսնակ չեմ: Ինչպես նշեցիք, այս համակարգում ծառայում եմ արդեն 11 տարի, ինչը, կարծում եմ, բավականաչափ ժամանակ է համակարգին ծանոթանալու համար: Գրեթե վեց տարի Կապանի զինկոմիսարիատում եմ ծառայում, եւ պաշտոնական պարտականություններին անցումը հեշտ է կատարվել, քանի որ ծանոթ եմ թե՛ անձնակազմին, թե՛ առկա խնդիրներին ու պրոբլեմներին: Թեպետ պետք է նշեմ, որ այս ողջ ժամանակահատվածում ծառայողական մասով առաջացած խնդիրները զինկոմիսարիատը մշտապես պատշաճ մակարդակով հաղթահարել է: Այնպես որ՝ լիովին ծանոթ եմ համակարգին, նոր պաշտոնին հարմարվելու փուլը սահուն է ընթացել, պարզապես ավելացել են ծառայողական պարտականությունները:

- Ձեր պաշտոնավարման առաջին լուրջ «քննությունը» կլինի 2018թ. ձմեռային զորակոչը: Եթե կարելի է, համառոտ ներկայացրեք դրա նախապատրաստման ընթացքը:

- Որպես Կապանի զինկոմի պաշտոնակատար՝ առաջին «քննությունս», եթե իհարկե այդպես կարելի է անվանել, համարում եմ այս տարվա սեպտեմբերի 30-ին ՀՀ նախագահի գլխավոր ռազմական տեսչության ստուգումների նպատակով անցկացրած զորահավաքային զորավարժությունները Մեղրիում:

Որպես Կապանի զինկոմ՝ առաջին զորակոչը հունվարին կանցկացնենք այնպես, ինչպես եղել է նախորդ տարիներին, քանի որ մեր առջեւ դրված է կոնկրետ խնդիր, որի լուծման համար կան կոնկրետ ձեւ, չափ, պայման եւ այլն: Ճիշտ է, ստեղծագործական մոտեցում մույնպես հարկավոր է զորակոչն անցկացնելիս, որի նպատակն է՝ հետաքրքրություն մտցնել այդ միջոցառման մեջ, նորակոչիկին ճանապարհել բանակ արդեն իսկ հայրենասիրական ոգով տոգորված, բարձր տրամադրությամբ:

Առիթից օգտվելով՝ կուզենայի խոսել ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի նախաձեռնությամբ արդեն իսկ կյանքի կոչ-



**Սմբատ Դադոյան. ծնվել է 1979թ. սեպտեմբերի 10-ին Երեւանում: Ավարտելով մայրաքաղաքի Սիմանոբոյի անվան միջնակարգ դպրոցը՝ 1996-2000թթ. սովորել է ավարտել է Կազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը (ներկայումս՝ համալսարան), 2000-2004թթ. ծառայել է Արմավիրի ուսումնական կենտրոնում՝ դասակի հրամանատար, 2004-2006թթ.՝ Քարվաճառի բրիգադայում՝ վաշտի հրամանատար: 2006-2012թթ. ծառայել է Մեղրու զինկոմիսարիատում՝ զորահավաքային բաժանմունքի պետ, զինկոմի տեղակալ, 2012-ից մինչ օրս Կապանի զինկոմիսարիատում է ծառայում, նախ՝ զորակոչի բաժանմունքի պետ, իսկ 2017թ. հոկտեմբերից՝ Կապանի զինվորական կոմիսար: Ամուսնացած է, ունի երեք որդի, մեկ դուստր:**

ված «Ես եմ» ծրագրի մասին, որի մասնակիցը կարող է դառնալ 2018թ. հունվարին զորակոչվող նորակոչիկը կամավորությամբ սկզբունքով: Այս օրերին արդեն հասցրել ենք հանդիպել մոտ 70 զինակոչիկի ու նրանց ծնողներին եւ ծանոթացրել ծրագրի պայմաններին: Ծրագրի դրույթների համաձայն՝ այն նորակոչիկները, ովքեր ցանկություն կհայտնեն ծառայությունն իրականացնել մարտական հերթապահություն իրականացնող զորամասում, իրավունք կստանան անցնելու ծառայության նոր տեսակի՝ ժամկետային պայմանագրային: Ծառայությունը կտևի 3 տարի, սակայն դրանցից գումարային 7 ամիս զինծառայողը կանցկացնի ազատ արձակման մեջ՝ սկսած 6-րդ ամսվանից, երբ իր ստորաբաժանումը կստանձնի մարտական հերթապահությունը՝ յուրաքանչյուր ամիս ծառայելով 1+1+2 բանաձեւով: Մեկ շաբաթ՝ արձակուրդում, մեկ շաբաթ՝ զորամասում

ծելու կամ փոքր գյուղտեխնիկա ձեռք բերելու (ծրագիր),

3. ուսման վարձի փոխհատուցում:

Ձինծառայողը կարող է պայմանագրից հրաժարվել ծառայության 24 ամսվա ընթացքում, դրանից հետո հնարավոր չէ: Եթե զինծառայողը ծրագրից հրաժարվում է վաղաժամկետ, տեղափոխվում է ծառայության այլ վայր եւ շարունակում պարտադիր զինծառայությունը: Իսկ ամսական արձակուրդի օրերը չեն հաշվարկվում զինծառայողի պարտադիր զինծառայության ընդհանուր ժամկետում: Պայմանագիրը վաղաժամկետ լուծարելու ժամանակ, եթե զինծառայողն արդեն անցել է 24-ամսյա ծառայություն, ապա նա զորացրվում է:

Ձինակոչիկի հետ պայմանագիրը կնքվում է վիճակահանությունից առաջ:

- Հետաքրքիր է՝ ինչպիսի՞ արձագանք է ստանում այդ ծրագիրը զինակոչիկների եւ նրանց ծնողների շրջանում:

- Չէի ասի, որ բացասական են արձագանքները, պարզապես թերահավատություն է նկատվում, ինչը բնական է, քանի որ առաջին անգամ է կիրառվում ծրագիրը: Բայց պետք է առանձնացնենք մի պարզ պատճառ այս ծրագրով ծառայելու համար, այն է՝ մեկնելով զինվորական ծառայության՝ զինակոչիկը խորապես գիտակցում է, որ հայրենիքը՝ երկիրը, ընտանիքը, ընկերները եւ այն ամենը, ինչ սիրում է, սկսվում է սահմանից, եւ այդ սահմանը պահողն ինքն է:

- Ձինվորական կոմիսարիատների միավորման վերաբերյալ ժամանակ առ ժամանակ խոսակցություն է շրջանառվում: Որքանո՞վ է այն համապատասխանում իրականությանը:

- Ընդամենը խոսակցություն է, պաշտոնական որեւէ որոշում այդ մասին առայժմ չկա. հարցը քննարկման, այսպես ասած՝ շրջանառվող խոսակցությունների փուլում է:

- Ձեր բարեմաղթանքը՝ հունվարին զորակոչվող նորակոչիկներին:

- Նախեւառաջ մեր երկրին ու նրա սահմաններին մաղթում եմ խաղաղություն, նորակոչիկներին՝ բարի ծառայություն եւ բարի վերադարձ հայրենի օջախներ: Աշխատանքի բերումով, ցավոք, որդեկրույս մայրերի եւ հանդիպել, փորձել կիսել նրանց վիշտը. դրանից ավելի մեծ ցավ չի կարող լինել, ուրեմն եւ մաղթում եմ մեր զինվորներին ողջ ու առողջ վերադարձ իրենց ծնողների գիրկը:

ԱՐՄԻՆԵ ՅՈՒՐԻՅԱՆ

# Արամ Յուլյան. ««Որոտանի ՅԷԿ-երի համակարգ»-ն իր կարելուորությամբ առաջնային դիրք է զբաղեցնում մեր հանրապետության էներգահամակարգում»

էջ 1 առաջնային դիրք է զբաղեցնում մեր հանրապետության էներգահամակարգում:

**- Նախորդ հարցազրույցներում նշել էիք, որ սպասվում են կառուցվածքային փոփոխություններ, նոր աշխատանք, մոտեցումներ եւ այլն: Ավարտվե՞լ է արդյոք այդ գործընթացը: Եթե, այո՞, ապա ներկայումս ինչպիսի՞ պատկեր ունենք:**

- Կառուցվածքային առումով հիմնական փոփոխությունն այն է, որ համակարգն ապակենտրոնացվել է, այսինքն՝ կասկադն ունի երեք տնօրեն՝ գլխավոր, ֆինանսական եւ արտադրության ղեկավար, որոնցից յուրաքանչյուրն աշխատում է իր ուղղությամբ՝ համապատասխան ստորաբաժանումներով: Այդ առումով աշխատանքի կազմակերպումն ավելի դյուրին է դարձել:

Ինչ վերաբերում է նոր աշխատանքին, մոտեցումներին, ապա «Քոնթուր Գլոբալ» ընկերությունն առանձնացրել է հինգ կարելուորագույն արժեք, որոնցով առաջնորդվում ենք մեր գործունեությունը ծավալելիս: Մեր արժեքներն այն ամենի հիմքում են, ինչ անում ենք ամեն օր: Դրանք կողմնորոշում են մեր վարքագիծը եւ մեր որոշումներն ինչպես աշխատավայրում, այնպես էլ՝ տանը: Արժեքներից առաջինը՝ գործել թափանցիկ եւ բարոյական բարձր չափանիշներով: Սա կորպորատիվ մակարդակով ընդունված ամենակարեւոր արժեքներից մեկն է, եւ մենք ձգտում ենք հասնել կորպորատիվ մակարդակին: Երկրորդը՝ հոգ տանել մեր աշխատակիցների առողջության, անվտանգության, բարօրության եւ զարգացման համար: Սա այն կետն է, որի վրա առանձնակի ուշադրու-

րությամբ եւ այն գիտակցությամբ, որ մենք կծախողենք, բայց երբ ծախողենք, ապա կստվորենք դրանից: Եվ վերջին արժեքը՝ հարգել այն մարդկանց նվիրումը, ովքեր վստահել են մեզ:

**- Կադրային քաղաքականության հարցում, որքանով տեղյակ ենք, որդեգրել եք երիտասարդ, բանիմաց մասնագետներով աշխատակազմը համալրելու գործընթաց: Կարողանո՞ւմ եք տեղում գտնել անհրաժեշտ մասնագետներ, թե՞ ստիպված դիմում եք հրավիրված մասնագետների օգնությանը:**

- Ասեմ, որ կադրերի համալրման հարցում Ձեր մատնանշած երկու տարբերակն էլ կիրառում ենք: Ունենք եւ Գայաստանի տարբեր շրջաններից հրավիրված, եւ տեղացի աշխատակիցներ: Կայաններում ընդունել ենք տեղացի երիտասարդ, նորավարտ կադրեր, ովքեր արդեն իսկ հասցրել են լավ ցուցանիշներ արձանագրել: Ներկայումս անվտանգության բաժնում մեկ նորավարտ երիտասարդ անցնում է փորձաշրջան, եւ համապատասխան քննություն հանձնելուց ու չափանիշները բավարարելուց հետո կանցնի հիմնական պարտականություններին: Այս առումով հիմնականում որոշ խնդիրներ են առաջանում մենեջմենթի հետ կապված, այն էլ՝ հիմնականում պայմանավորված անգլերենի իմացությամբ (մեր բոլոր զեկույցները երկլեզու են՝ հայերեն եւ անգլերեն), բայց ընկերությունում կազմակերպվող դասընթացների միջոցով, որոնցում ներգրավված են մեծ թվով աշխատակիցներ, կարծեք թե, այդ հարցը նույնպես լուծում է ստանում: Այդ առումով դրական տեղաշարժ ենք արձանագրել, քանի որ աշխատակիցներից շատերն արդեն

կան «Վոյտ» եւ պորտուգալական «Էֆասեկ» կազմակերպությունների հետ, որոնք ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են իրականացնում (չափման եւ զճագրման աշխատանքներ, հա-

- Լուրջ խնդիրներ, որպես այդպիսիք, չկան: Ժամանակ առ ժամանակ խափանումներ ենք ունենում՝ պայմանավորված հնամաշ սարքավորումներով, որոնք, իհարկե, լուծելի են: Համոզված եմ 2018թ. նոր սար-

**ցիալական ծրագրեր: Ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2017թ. կամ ընթացիկ փուլում են, եւ ի՞նչ է նախատեսվում:**

- «Քոնթուր Գլոբալ» ընկերությունն իր կորպորատիվ ռազմավա-



Շամբի ջրամբարի ջրթափ՝ «Մարգարիտկա»

մապատասխան սարքավորումների, նյութերի ձեռքբերում եւ այլն), իսկ 2018թ. հունիսից կսկսվեն բուն աշխատանքները: Վերակառուցման աշխատանքների շրջանակներում կփոխվեն բոլոր հիմնական էլեկտրամեխանիկական սարքավորումները:

Ինչ վերաբերում է աշխատակիցների աշխատանքային պայմաններին բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներին, ապա դրանք ավարտվել են: Ներկայումս կատարվում են օժանդակ շինությունների վերանորոգման աշխատանքներ:

քավորումներ տեղադրելով՝ նմանատիպ տեխնիկական խնդիրներ այլես չեն առաջանա, եւ շահագործումն ավելի հուսալի կլինի: «Որոտանի ՅԷԿ-երի համակարգ»-ը գործում է շատ կայուն, մեծ ցնցումներ, լուրջ խափանումներ չենք ունեցել:

Երեւի թե մեր ամենալուրջ խնդիրը բնության հետ է կապված, այսինքն՝ համապատասխան ջրաչին պաշարներ ունենալ, որ ամբողջացնում է յուրաքանչյուր տարվա հունիս ամսին:

**- Մարդկանց (աշխատողների) անվտանգության ապահովումը հոչակել էիք առաջնահերթ խնդիր: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների ինչպիսի՞ արդյունք ունեք:**

- «Նպատակը՝ դժբախտ պատահարների զրոյական ցուցանիշ» սկզբունքով ենք առաջնորդվում, եւ այս ժամանակահատվածում, բարեբախտաբար, արտադրությունում պատահար չենք արձանագրել, բայց տրանսպորտային բնույթի մի փոքրիկ պատահար է եղել, ինչի հետեւանքով ցուցանիշների մեջ փոփոխություն է տեղի ունեցել:

\*\*\*

«Քոնթուր Գլոբալ» ընկերության տարածաշրջանում 2017թ. իրականացրած սոցիալական ծրագրերի մասին հարցին պատասխանեց ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության

ծրագրերի համակարգող Ջարուհի Խաչատրյանը, ով, ի դեպ, մեր նախորդ այցելության ժամանակ փորձաշրջան էր անցնում ընկերությունում: «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲ ընկերության արտադրության ղեկավար Արամ Յուլյանի հավաստմամբ՝ Ջարուհի Խաչատրյանը կարճ ժամանակամիջոցում կարողացավ հարմարվել ընկերության աշխատանքին՝ ցուցաբերելով բարձր ցուցանիշներ, կոլեկտիվում աշխատելու կարողություն եւ համապատասխան հմտություններ:

**- Ընկերությունն այս ժամանակահատվածում տարածաշրջանում իրականացրել է մի շարք սո-**

րությանը համահունչ (սոցիալական ներդրումների ռազմավարություն) պարտավորվում է ամեն տարի ընկերության ազդակիր համայնքներում իրականացնել կորպորատիվ սոցիալական ծրագրերի որոշակի բյուջեի շրջանակներում: 2017թ. համար նախատեսվել է հինգ սոցիալական ծրագիր, որից երկուսն արդեն ավարտվել է, իսկ երեքն ընթացիկ փուլում է: Արդեն ավարտվել են Գորիսի Գրիգոր Տաթևացու փողոցում ֆուտբոլի դաշտի կառուցման, Դարբասի միջնակարգ դպրոցում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծման ծրագրերը: Բռնակոթի միջնակարգ դպրոցում «Վոլրլ Կիժմ Գայաստան» կազմակերպության հետ համատեղ ինժեներական լաբորատորիայի ստեղծման գործում մեր ընկերությունը հանդես է գալիս համապատասխան դասասենյակի վերանորոգման ծրագրով: Մյուս երկու ընթացիկ փուլում գտնվող ծրագրերն են Օղուկ գյուղի արտաքին լուսավորության ցանցի ստեղծումը եւ Գորիսի «Այունիք» պարային համույթին ազգագրական հագուստի տրամադրումը: Նշեմ, որ սոցիալական ծրագրերն իրականացվում են ընկերության 15 ազդակիր համայնքում:

2018թ. սոցիալական ծրագրերի մասին խոսելը դեռես վաղ է, քանի որ դրանց հաստատման գործընթացը երկար է տևում: Յուրաքանչյուր տարվա սկզբին մեր կողմից այդ ծրագրերը ներկայացվում են ընկերության կորպորատիվ սոցիալական ծրագրերի պատասխանատվության կոմիտե, որտեղ քննարկվում են հնարավոր տարբերակները, հետո ներկայացվում կորպորատիվ կոմիտե, որն էլ իր հերթին հաստատում կամ մերժում է, որից հետո սկսվում է իրականացման գործընթացը: Այդ ծրագրերն իրականացվում են հինգ ոլորտում՝ կրթական, մշակութային, մարզական, հակակոռուպցիոն եւ բնապահպանական:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Տաթև ՅԷԿ-ը

թյուն ենք դարձնում՝ հոչակելով անվտանգության, բնապահպանության որպես կարելուոր արժեքների պահպանման կարելուոր սկզբունք: Երրորդը՝ աշխատել ջանասիրաբար եւ առանց սահմանափակումների՝ որպես բազմազգ ու ամբողջական թիմ, քանի որ մեր ընկերությունն աշխարհի ավելի քան 20 երկրում գործունեություն է ծավալում, ուստի շատ կարելուոր է, որ տարբեր կուլտուրա ունեցող աշխատակիցները փորձեն աշխատել միեւնոյն չափանիշներով: Հաջորդը՝ ակնկալել, ներգրավվել եւ հնարավորություն ստեղծել զարգացման ու շարունակական ուսուցման համար՝ խոնար-

տիրապետում են անգլերեն լեզվին:

**- Բացի կառուցվածքային փոփոխություններից՝ նախատեսվում էին նաեւ իրականացնել այլ բնույթի աշխատանքներ՝ առկա հիդրոսարքավորումների, միջոցների արդիականացում, կայանների վերազինում ու վերանորոգում եւ այլն: Ի՞նչ փուլում են այդ աշխատանքները:**

- Վերակառուցման աշխատանքների կազմակերպման գործընթացն սկսվել է այս տարվա սեպտեմբերի վերջին, ստորագրվել են համապատասխան պայմանագրեր երկու կապալառու ընկերության՝ ավստրիա-

**- Հետաքրքիր է՝ թունելների վերանորոգման ծրագրեր նույնպես իրականացվե՞լ են կամ նախատեսվո՞ւմ են:**

- Այս տարի համակարգի թունելներում աշխատանքներ չեն իրականացվել, 2018թ. նախատեսվում է դրանցում ուսումնասիրություններ անցկացնել, որոնց եզրակացության հիման վրա, անհրաժեշտության դեպքում, կկատարվեն վերանորոգման աշխատանքներ:

**- Եվ, այնուհանդերձ, որո՞նք են ընկերության առջեւ ծառայած խնդիրները (թվարկեք մեկ-երկուսը), եթե, իհարկե, այդպիսիք կան:**

